մարդկային գլուխներից կեանքի մէջ մտած։

Կար մի կարեւոր հանգամանք եւս, որը իր հերթին նոյնպէս մարդկանց մտածողութիւններն ու ցանկութիւնները ուղղում էր դէպի անկախութեան գաղափար։ Դա ազգային ինքնաճանաչութիւնն էր, որ կամաց-կամաց արթնանում էր հայ ժողովրդի մէջ, գլխաւորապէս նրա մտաւորական խաւերի մէջ, սկսած 17-րդ դարի սկիզբներից։

Ինչպէս տեսանք՝ հայ մտաւոր կեանքը սկսել էր վերածնուել։ Գիրն ու գրականութիւնը, որ նախորդ դարերում — կարելի է ասել — համարեա մոռցուած էին, սկսում են վերակենդանութեան նշաններ ցոյց տալ։ Բացւում են մի շարք վանական դպրոցներ. ասպարէզ են գուրս գալիս բաւական թուով մտքի մշակներ, որոնք սկսում են ուսում, լոյս տփռել իրենց շուրջը։ Ի հարկէ, այդ բոլորը ժամանակի անծայրածիր խաւարի հետ համեմատած դեռ եւս շատ թոյլ էին, բայց եւ այնպէս բոլորովին ժխտել նրանց ազդեցութիւնը գոնէ որոշ թուով անհատների նկատմամբ — չի կարելի։ Իսկ այդ արթնացման առաջին բարերար արդիւնքը պիտի լինէր ազգային ինքնաճանաչութիւնը։

Կարդալով հին գրքերը եւ ծանօթանալով հին մատենագրութեան հետ, հայրենասիրութեան ոգին բնականօրէն պիտի արծարծուէր նրանց սրտերում։ Նրանք պիտի տեսնէին, որ հայերը միշտ էլ այսպէս ստրուկ եւ արհամարհուած չեն եղել, օտարներին հպատակ եւ հալածուած։ Պիտի տեսնէին, որ նրանք էլ մի ժամանակ անկախ են եղել, իրենց երկրի ու ճակատագրի տէրը, եւ ապրել են ազատ, ինքնանկախ։ Այստեղից էլ շատ հետեւողականօրէն անկախութեան գաղափարը պիտի ծնուէր նրանց հոգիներում, որովհետեւ միայն այդ ճանապարհով իրենք էլ կարող էին իրենց նախնիքների բախտին հասնել։

Կար մի երրորդ հանգամանք եւս, որը միշտ վառ էր պահում Հայաստանի անկախութեան միտքը հայ ժողովրդի ծոցում եւ միաժամանակ հաւատ ներշնչում նրան, որ այդ անկախութիւնը մի երազ չէ, դատապարտուած երբեք իրականութիւն չդառնալու, այլ մէկ բան է նա, որի իրականացումը միանգամայն հնարաւոր է։ Դա Սիւնիքի կամ աւելի ճիշդ — ներկայ առումով — Ղարաբաղի առանձնայատուկ վիճակն էր մէկ կողմից, իսկ միւս կողմից՝ տիրող Պարսկաստանի թուլութիւնը։

Շնորհիւ գլխաւորապէս իր լեռնային անառիկ մակերեւոյթի եւ միեւնոյն ժամանակ նաեւ իր ժողովրդի քաջ ոգու, այդ երկիրը համեմատաբար լաւ էր պաշտպանուած, քան Հայաստանի միւս մասերը, եւ աւելի նուազ չափերով մահմեդական բռնութիւններին ենթարկուած։ Նա մի տեսակ կիսանկախ աշխարհ էր, աւելի լաւ կազմակերպուած եւ ունէր իր ազգային իշխանութիւնը՝ յանձին մելիքների։ Այս վերջիններն էլ, լինելով նախկին Ղարաբաղի ազատ իշխանների յաջորդները, բնական է, որ չհրաժարուէին երբեք ազատութեան մտքից եւ ձգտէին ազատութեան։ Եւ դա չէր կարող համարուել ցնորական մի ծրագիր նրանց համար, քանի որ նախ՝ թշնամին թոյլ էր, երկրորդ՝ իրենք ունէին իրենց իշխանութեան տակ կենտրոնացրած մի քաջ եւ կազմակերպուած ժողովուրդ։

Արդարութիւնը պահանջում է խոստովանել, որ Հայաստանի անկախութեան գաղափարի հրահրողը — բայց ոչ հեղինակը — հանդիսացան կաթոլիկ քարոզիչները, որ այդ ժամանակները բաւական մեծ թուով վխտում էին Հայաստանում։ Զուկը պղտոր ջրում է հեշտ որսացւում։ Մեր երկրի պայմանները, մանաւանդ պարսկական մասում, այնպէս էին, որ մարդոսութիւնը կարող էր հեշտ երեւալ կաթոլիկ քարոզիչներին։ Ուստի նրանց թիւն ու կազմակերպութիւնները բաւական շատ էին մեզանում։

Դեռ 14-րդ դարի սկիզբներից Յովհաննէս ԻԲ Պապը, հայ ժողովրդի «հոգու փրկութեան համար» մտածելով, Դոմինիկեան Բարթուղիմէոս եպիսկոպոսին ուղարկեց Հայաստան՝ որպէս եպիսկոպոս Մարաղայի եւ քարոզիչ Ատրպատականի (1318 թ.)։ Սա ունեցաւ բազմաթիւ հայ աշակերտներ, որոնց մէջ, մեր երկրում իրենց խաղացած դերով, ամենից նշանաւորներն են՝ Յովհաննէս Քռնեցի, Ներսէս Պալենց՝ Ուրմիոյ եպիսկոպոս, եւ Սիմոն բէկ՝ Կարնոյ եպիսկոպոս, որոնք եւ միաբանող եղբարց կամ Միաբարների (Ունիթոր) կարգը հաստատեցին Հայաստանում։ Կենտրոնն էր Հին Նախիջեւան գաւառի Ջահուկ գաւառակը,